**ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ ԹԻՎ 2**

**18.12.2025Թ. ԿՆՔՎԱԾ N «ՉՀ-ԲՄԱՇՁԲ-2025/7» ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳՐՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

ք. Չարենցավան «12» 06 2026թ.

Չարենցավանի համայնքապետարանը, ի դեմս համայնքի ղեկավար Հ. Կ. Շահգալդյանի, որը գործում է կազմակերպության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Պատվիրատու), մի կողմից, և «ԱԼՏԵՔ» ՍՊԸ-ն, ի դեմս տնօրեն Ա. Բասենցյանի, որը գործում է Կազմակերպության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Կապալառու), մյուս կողմից, երկուսը միասին այսուհետ՝ Կողմեր, ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական օրենսդրությամբ, հիմք ընդունելով 18.12.2025թ. կնքված N «ՉՀ-ԲՄԱՇՁԲ-2025/7» գնման պայմանագրի (այսուհետ՝ Պայմանագիր) 8.5-րդ և 8.6-րդ կետերը, «ԱԼՏԵՔ» ՍՊԸ-ի կողմից ներկայացրած 09.06.2026թ. թիվ 2633/04 գրությունը և այն հանգամանքը, որ փոփոխությունը չի դասվում ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 56-րդ կետի 4-րդ ենթակետով սահմանված արհեստական փոփոխությունների շարքին, կնքեցին սույն համաձայնագիրը հետևալի մասին:

## 1. ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

Հետագա համագործակցության նպատակով՝ Կողմերը որոշեցին՝

1.1 18.12.2025թ. կնքված N «ՉՀ-ԲՄԱՇՁԲ-2025/7» գնման պայմանագրի գործողության ժամկետը երկարաձգել 30 օրացուցային օրով՝ աշխատանքների կատարման վերջնաժամկետը սահմանելով մինչև 2026 թվականի հուլիսի 30-ը ներառյալ:

## 2. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

2.1 Սույն Համաձայնագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և հանդիսանում է Պայմանագրի անբաժանելի մասը:

2.2 Սույն Համաձայնագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

2.3 Սույն Համաձայնագրում Կողմերի չնշված պարտավորությունները թողնվում են անփոփոխ:

2.4 Սույն Համաձայնագիրը կազմված է 1 (մեկ) էջից, կնքվում է հայերեն լեզվով, երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ:

## 3. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

| «ՊԱՏՎԻՐԱՏՈՒ» | «ԿԱՊԱԼԱՌՈՒ» |
|---|---|
| **Չարենցավանի համայնքապետարան** | **«ԱԼՏԵՔ» ՍՊԸ** |
| **ք. Չարենցավան Կ. Դեմիրճյան հրապարակ թիվ 1** | **Կոտայքի մարզ, գյուղ Ջրվեժ, 13 փողոց, 9/1** |
| **ՀՀ ՖՆ ԳՎ** | **«ԱԿԲԱ ԲԱՆԿ» ԲԲԸ** |
| **Հ/Հ 900132172017, 900132000143** | **Հ/Հ 220463333041000** |
| **ՀՎՀՀ 03022497** | **ՀՎՀՀ 00901356** |
| | **Էլ. փոստ՝ altechwin@gmail.com** |
| | **Հեռ. (+37441) 55-30-61, (+37494) 20-25-60** |
| **Համայնքի ղեկավար՝ Հ. Կ. Շահգալդյան** | **Տնօրեն՝ Ա. Բասենցյան** |
| (ստորագրությունը) | (ստորագրությունը) |
| Կ.Տ | Կ.Տ |